

ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐԱՌՈՂ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ

Բաց Բաժնետիրական Ընկերություն





ՀՀ, ք. Երևան, Պուշկինի 19, հեռ. 54-78-95, ֆաքս 54-78-94, էլ. փոստ araratbank@araratbank.am

Հաշվետվություն թիվ 44, 03.05.12թ.


տեղաբաշխված արժեթղթերի դասը՝	բաժնետոմս,	պարտատոմս
արժեթղթերի քանակը՝	1,192,401 հատ,	25,000 հատ
արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)՝	5,000 ՀՀ դրամ,	10,000 ՀՀ դրամ

“Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ հաշվետվությունում ներառվող տեղեկությունները ճշգրիտ և ստույգ են և չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել փաստաթղթի ամբողջականությունը”:

ստորագրող անձինք՝

Սուրեն Կարապետյան (անուն, ազգանուն)	Վարչության անդամ, Տարածքային ստորաբաժանումների գործունեության կորրեկցիանցման բաժնի պետ (պաշտոն)	 (ստորագրություն)	03.05.12թ. (ամսաթիվ)
Տիգրան Գալստյան (անուն, ազգանուն)	Վարչության անդամ, Գլխավոր հաշվապահ (պաշտոն)	 (ստորագրություն)	03.05.12թ. (ամսաթիվ)
Դավիթ Հարությունյան (անուն, ազգանուն)	Վարչության անդամ, Գործադիր տնօրենի տեղակալ (պաշտոն)	 (ստորագրություն)	03.05.12թ. (ամսաթիվ)
Նշան Գրիգորյան (անուն, ազգանուն)	Վարչության անդամի ժ/պ, Գործադիր տնօրենի տեղակալ (պաշտոն)	 (ստորագրություն)	03.05.12թ. (ամսաթիվ)

Ստորագրությունները հավաստում են՝

Աշոտ Օսիպյան (անուն, ազգանուն)	Վարչության նախագահ, Գործադիր տնօրեն (պաշտոն)	 (ստորագրություն)	03.05.12թ. (ամսաթիվ)
--	--	--	-------------------------

3 մայիսի 2012 թ.

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողով հրավիրելու մասին
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ խորհրդի 2012 թվականի ապրիլի 26-ի թիվ 14/07Լ որոշում
(ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ խորհրդի որոշումը կցվում է):

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ տնօրինություն

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ

Հասցե՝ 0010, ՀՀ, ք. Երևան, Պուշկինի 19 Հեռ.՝ (+37410) 54-78-95 Ֆաքս՝ (+37410) 54-78-94 Էլ. փոստ՝ araratbank@araratbank.am

ք. Երևան

“ 26 ”-ը ապրիլի 2012թ.

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ԽՈՐՀՈՒՐԴ Ո Ր Ո Շ ՈՒ Մ 14 / 07Լ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով “Իրավական ակտերի մասին” Հայաստանի Հանրապետության օրենքի Հոդված 23-ի 1-ին մասը, “Բաժնետիրական ընկերությունների մասին” Հայաստանի Հանրապետության օրենքի Հոդված 84-ի 1-ին մասի բ)-ից ե), ժգ) կետերը, “Բանկերի և բանկային գործունեության մասին” Հայաստանի Հանրապետության օրենքի Հոդված 21⁶-ի 1-ին մասի բ), ը), թ) կետերը, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ կանոնադրության 12.1. կետի բ), ը), թ), ժէ) ենթակետերը՝ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց .

1. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերի 2012 թվականի տարեկան ընդհանուր ժողովը հրավիրել 2012 թվականի հունիսի 19-ին ժամը 14⁰⁰-ին՝ ք. Երևան, Ամիրյան 1 հասցեում՝ Արմենիա Մարիոթ հյուրանոցի Տիգրան Մեծ դահլիճում:
2. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերի 2012 թվականի տարեկան ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերի ցուցակը կազմելու օր սահմանել 2012 թվականի ապրիլի 28-ը:
3. Նախնական հաստատել և ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի հաստատմանը ներկայացնել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ 2011 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունները՝ համաձայն Հավելված 1-ի:
4. Բանկի տարեկան ընդհանուր ժողովին ներկայացնել շահութաբաժինների բաշխման առաջարկություն՝ համաձայն Հավելված 2-ի:
5. Հաստատել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերի 2012 թվականի տարեկան ընդհանուր ժողովի օրակարգը՝ համաձայն Հավելված 3-ի:
6. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերի 2012 թվականի տարեկան ընդհանուր ժողովը հրավիրելու մասին բաժնետերերին ծանուցել պատվիրված նամակներ ուղարկելու միջոցով:
7. Հաստատել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերին տրամադրվող տեղեկությունների և նյութերի ցանկը՝ համաձայն Հավելված 4-ի:
8. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերին տեղեկացնել, որ սույն որոշման 7-րդ կետով հաստատված ցուցակում ընդգրկված նյութերին կարող են ծանոթանալ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ վարչական շենքում (ք. Երևան, Պուշկինի 19), ինչպես նաև համացանցի Բանկի տնային էջում (www.araratbank.am):
8. Հաստատել օրակարգի հարցերի վերաբերյալ քվեաթերթիկների ձևը՝ համաձայն Հավելված 5-ի:
9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Խորհրդի նախագահ՝

Բ. Բեգլարյան

Իսկականի հետ ճիշտ է՝
Աշխատակազմի ղեկավար
Մ. Ուզունյան



Ա Ռ Ա Ջ Ա Ր Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Շահութաբաժինների բաշխման վերաբերյալ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհուրդը հաշվի առնելով 2011 թվականի ֆինանսական գործունեության արդյունքները ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերի ընդհանուր ժողովին առաջարկում է.

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ 2011 թվականի գործունեության արդյունքում առաջացած 2.104.762.000 ՀՀ դրամ գուտ շահույթից 268.290.225 ՀՀ դրամն ուղղել բաժնետերերին շահութաբաժինների վճարմանը, որի արդյունքում մեկ բաժնետոմսի դիմաց վճարման ենթակա է 225 ՀՀ դրամ: Վճարումն իրականացնել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշման կայացման պահից 15 (տասնհինգ) աշխատանքային օր հետո:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

2012 թվականի հունիսի 19-ին կայանալիք ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի

1. Հաշվիչ հանձնաժողովի անդամների ընտրության մասին:
2. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության 2011 թվականի գործունեության արդյունքները հաստատելու մասին:
3. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության տարեկան ֆինանսական հաշվետվությունները հաստատելու մասին:
4. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ 2011 թվականի գործունեության արդյունքում առաջացած զուտ շահույթի բաշխումը հաստատելու մասին, որով
 - ա) 110,000,000 (մեկ հարյուր տասը միլիոն) ՀՀ դրամը կուղղվի պահուստային հիմնադրամի համալրմանը,
 - բ) 268,290,225 (երկու հարյուր վաթսունութե միլիոն երկու հարյուր իննսուն հազար երկու հարյուր քսանհինգ) ՀՀ դրամը կվճարվի որպես շահութաբաժիններ:

Ց Ա Ն Կ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերին տրամադրվող տեղեկությունների և նյութերի

1. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերի 2012 թվականի տարեկան ընդհանուր ժողովի օրակարգը:
2. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ 2011 թվականի գործունեություն արդյունքները:
3. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ 2011 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունները:
4. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ 2011 թվականի զուտ շահույթից շահութաբաժինների բաշխման առաջարկ:
5. Ժողովի օրակարգի հարցերի վերաբերյալ քվեաթերթիկը:

ԾԱՆՈՒՑՈՒՄ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի տարեկան
ընդհանուր ժողովի մասին

Հարգելի բաժնետեր

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերությունը (գտնվելու վայրը՝ ք.Երևան, Պուշկինի 19) 2012 թվականի հունիսի 19-ին ժամը 14:00-ին ք.Երևան, Ամիրյան 1 հասցեում՝ Արմենիա Մարիոթ հյուրանոցի Տիգրան Մեծ դահլիճում, հրավիրում է բաժնետերերի 2012 թվականի տարեկան ընդհանուր ժողով:

Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմվել է 2012 թվականի ապրիլի 28-ի դրությամբ:

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի օրակարգը կցվում է սույն ծանուցմանը:

Ժողովում քննարկվող հարցերին վերաբերող նյութերին Դուք կարող եք ծանոթանալ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ վարչական շենքում (ք. Երևան, Պուշկինի 19), ինչպես նաև համացանցի Բանկի տնային էջում (www.araratbank.am)՝ սկսած 2012 թվականի մայիսի 03-ից մինչև հունիսի 19-ը ներառյալ:

Միաժամանակ սույն ծանուցմանը կից Ձեզ ենք ներկայացնում ժողովի օրակարգի հարցերի վերաբերյալ քվեաթերթիկը:

Հարգանքով՝

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ վարչության նախագահ

Աշոտ Օսիպյան